ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2026թ. թիվ 566-Ա

Կ.ՍԱՀԱԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊՐԻՎՈԼՆՈՅԵԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2026 թվականի հուլիսի 28-ի թիվ 549-Ա և 2026 թվականի հուլիսի 28-ի թիվ 550-Ա որոշումները, հաշվի առնելով Կ.Սահակյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Կորյուն Սահակյանին 2026 թվականի հուլիսի 29-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունները կատարող՝ մինչև օրենքով սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի նշանակումը:

2. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարման համար Կ.Սահակյանին տալ լրավճար «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-29 16:54:44 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2026թ. հուլիսի 29
ք.Վանաձոր